ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4445-Ա « 10 » սեպտեմբերի 2026թ.

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՍԱՐԳԻՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՆԽԵՆ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սարգիս Մանուկյանի գրությունը՝ INTERGEO 2026 միջազգային ցուցահանդեսին և համաժողովին մասնակցելու նպատակով.

1. «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սարգիս Մանուկյանին՝ 2026 թվականի սեպտեմբերի 15-ից 18-ը գործուղել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Մյունխեն քաղաք:
2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին:
3. «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սարգիս Մանուկյանի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ընկերության տնօրենի տեղակալ Արսեն Ներսիսյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ